

Փրկարար ծառայության հարգելի՛ աշխատակիցներ, վետերաններ,
Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ՝ մասնագիտական օրվա կապակցությամբ:
Փրկարարի բարդ, պատասխանատու և վտանգավոր աշխատանքն
ընտրած մարդիկ միշտ և բոլոր ժամանակներում վայելել են
հասարակության վստահությունը, քանզի նրանց ենք դիմում ցանկացած
արտակարգ իրավիճակում և նրանց շնորհիվ ենք մեզ անվտանգ ու
պաշտպանված զգում:

Փրկարար լինելն առաքելություն է, և մեր փրկարարները դա ապացուցել
են բազմաթիվ անգամներ՝ դեմ հանդիման գնալով տարատեսակ
աղետների ու արհավիրքների:

Ինչպես խաղաղ, այնպես էլ համավարակի և պատերազմական
ժամանակներում Դուք արժանապատվորեն, պատրաստվածությամբ,
պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումով եք իրականացրել
Ձեր մարդասիրական առաքելությունը՝ հավատարիմ Ձեր վեհ կոչմանը:

Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր ընտրել ու անցնում են այս
վտանգավոր, նաև՝ պատասխանատու ճանապարհով:

Կրկին շնորհավորելով տոնի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ անվտանգ
ծառայություն, բարօրություն՝ Ձեր ընտանիքներին և խաղաղություն մեր
երկրին:

Աստված պահապան բոլորիս: